ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2013 թվականի N 185 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1) ենթակետի, 5-րդ և 6-րդ կետերի դրույթներով և համաձայն մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից ստացված խորհուրդների կազմում փոփոխություններ կատարելու մասին գրավոր առաջարկությունների, որոշում եմ՝

1. ՀՀ Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին>> N 241-Ա որոշման N1-N115 հավելվածներում կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1-N 113 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին>> N 241-Ա որոշման N 31 և N 39 հավելվածները:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. դեկտեմբերի 25
ք. Կապան